



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2011թ. դեկտեմբերին /վերլուծություն/

2011թ. դեկտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 22393 գործարքներ, որոնց քանակը 2011թ. նոյեմբերի համեմատ աճել է 31.7%-ով, իսկ 2010թ. դեկտեմբերի համեմատ՝ 26.5%-ով:

2011թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2011թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2011թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4712 օտարման գործարքների 77.2%-ը կազմել են առուվաճառքները, 22.2%-ը՝ նվիրատվությունները և 0.6%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 35.1%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 34.5%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2011թ. դեկտեմբերին, 2011թ. նոյեմբերի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը աճել է 13.7%-ով, իսկ 2010թ. դեկտեմբերի համեմատ ` 7.9%-ով:

2011թ. դեկտեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 60.8%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2011թ. դեկտեմբերին, 2011թ. նոյեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն նվազել է 1.3%-ով, իսկ 2010թ. դեկտեմբերի համեմատ ` 10.5%-ով:

2011թ. դեկտեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	դեկտեմբեր 2010թ.	դեկտեմբեր 2011թ.	նոյեմբեր 2011թ.
Կենտրոն	440600	426395	452000
Արաբկիր	355800	339761	335300
Քանաքեռ-Զեյթուն	275800	264833	260800
Նոր-Նորք	225800	229554	232200
Ավան	232400	239224	242200
Էրեբունի	239100	233915	232900
Շենգավիթ	237600	231482	232500
Դավթաշեն	263200	256476	257000
Աջափնյակ	224400	227193	232800
Մայաթիա-Սեբաստիա	223600	224419	220700
Նուբարաշեն	149100	147187	140100
Միջինը Երևանում /բացի Նորք-մարաշից/	260700	256400	258000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2011թ. դեկտեմբերին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2011թ. նոյեմբերի համեմատ, նվազել են 0.6%-ով:

2011թ. դեկտեմբերին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 403 բնակարաններ, որոնց քանակը, 2011թ. նոյեմբերի համեմատ աճել է 14.8%-ով իսկ 2010թ. դեկտեմբերի համեմատ է 11.9%-ով:

2011թ. դեկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		դեկտեմբեր 2010թ.	դեկտեմբեր 2011թ.	նոյեմբեր 2011թ.
Արագածոտն	Աշտարակ	136900	108196	121120
	Ապարան	46000	50300	52700
	Թալին	57500	62800	68100
Արարատ	Արտաշատ	95600	91553	94000
	Մասիս	134600	107623	111300
	Վեդի	96100	99872	93300
	Արարատ	84800	72176	78900
Արմավիր	Վաղարշապատ	155500	143417	139500
	Արմավիր	126100	114475	114800
	Մեծամոր	84400	86581	79600
Գեղարքունիք	Սևան	93100	96477	88600
	Գավառ	48300	55535	53600
	Մարտունի	86500	105464	92600

	Վարդենիս	31600	34005	33500
	Ճամբարակ	20600	22800	26600
Լոռի	Վանաձոր	90500	81456	84000
	Ստեփանավան	59700	80115	76600
	Սպիտակ	83800	103267	102200
	Ալավերդի	33700	51183	39400
	Տաշիր	37000	45787	51600
	Թումանյան	6200	12500	13300
	Շամլուղ	3400	8300	10200
	Ախթալա	14400	19700	24100
		Աբովյան	147100	145527
Կոտայք	Նոր Հաճն	131800	128165	131100
	Բյուրեղավան	105100	107500	102100
	Եղվարդ	109700	109828	111400
	Հրազդան	62000	57773	60300
	Ծաղկաձոր	177000	301487	207800
	Չարենցավան	76200	82762	76900
		Գյումրի	115800	100088
Շիրակ	Արթիկ	63200	63094	65200
	Մարալիկ	30200	35782	39200
		Գորիս	139000	116339
Սյունիք	Կապան	101600	89458	95100
	Սիսիան	84100	79784	83400
	Մեղրի	62000	68500	74100
	Ագարակ	34500	39700	47200
	Քաջարան	60400	105941	71600
	Դաստակերտ	8000	8000	8000
		Վայք	71900	81300
Վայոց Ձոր	Եղեգնաձոր	110800	127208	115100
	Ջերմուկ	121000	85529	111600
		Դիլիջան	105900	92656
Տավուշ	Իջևան	130500	113085	119300
	Բերդ	42200	49700	56000
	Նոյնմբերյան	34400	40200	43300
	Այրում	24200	24684	31000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2011թ. դեկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2011թ. նոյեմբերի համեմատ, աճել են 1.5%-ով:

2011թ. դեկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 497 առուվաճառքի գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 126, մարզերում միասին վերցրած՝ 371: 2011թ. դեկտեմբերին, 2011թ. նոյեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 2.0%-ով, ընդ որում Երևանում մնացել է անփոփոխ, իսկ մարզերում միասին վերցրած նվազել՝ 2.6%-ով: 2010թ. դեկտեմբերի համեմատ՝ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 5.5%-ով, ընդ որում Երևանում՝ 0.8%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 7.2%-ով:

2011թ. դեկտեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	դեկտեմբեր 2010թ.	դեկտեմբեր 2011թ.	նոյեմբեր 2011թ.
Կենտրոն	472000	460000	470000
Արաբկիր	384000	370300	372200

Քանաքեն Ձեյթուն	290000	275200	279800
Նորք Մարաշ	276000	302200	308300
Ավան	247000	249700	253200
Էրեբունի	249500	220000	237100
Շենգավիթ	252000	239700	242500
Դավթաշեն	277000	258300	269200
Աջափնյակ	242400	237100	242000
Մալաթիա Սեբաստիա	239000	220700	230000
Նուբարաշեն	150900	144800	144800
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	280000	270700	277200

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2011թ. դեկտեմբերին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2011թ. նոյեմբերի համեմատ նվազել են են 2.3%:

2011թ. դեկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		դեկտեմբեր 2010թ.	դեկտեմբեր 2011թ.	նոյեմբեր 2011թ.
Արագածոտն	Աշտարակ	144000	130000	133349
	Ապարան	49000	53800	55100
	Թալին	57800	70000	72000
Արարատ	Արտաշատ	100500	103000	103400
	Մասիս	139500	113950	114200
	Վեդի	100000	96100	96200
	Արարատ	90000	89000	89100
Արմավիր	Վաղարշապատ	165500	161800	162000
	Արմավիր	132000	117000	117100
Գեղարքունիք	Սևան	98000	93850	94300
	Գավառ	51200	46900	47300
	Մարտունի	89900	96500	97200
	Վարդենիս	34200	38350	38500
	Ճամբարակ	23300	28000	28800
Լոռի	Վանաձոր	97500	96900	97000
	Ստեփանավան	63600	79000	79500
	Սպիտակ	87500	109100	109200
	Ալավերդի	36500	40200	40400
	Տաշիր	40500	54150	54200
	Թումանյան	10800	13900	13900
	Շամլուղ	7500	11500	11500
	Ախթալա	18300	25200	25200
Կոտայք	Աթոլյան	162500	153400	154100
	Նոր Հաճն	136800	132100	133200
	Բյուրեղավան	109500	109000	109300
	Եղվարդ	116500	120100	121300
	Հրազդան	66000	66900	67800
	Ծաղկաձոր	318000	307700	307800
	Չարենցավան	80500	78100	78200
	Գյումրի	125000	118400	118500

Ծիրակ	Արթիկ	64000	67900	68100
	Մարալիկ	32500	40100	40200
Սյունիք	Գորիս	144000	127000	127100
	Կապան	107500	99800	100500
	Սիսիան	87100	88700	89100
	Մեղրի	64200	75800	76100
	Ագարակ	35900	48200	48200
	Դաստակերտ	10500	10000	10500
Վայոց Ձոր	Վայք	75000	82000	83800
	Եղեգնաձոր	113000	118500	119600
	Զեյթուն	123000	116000	117200
Տավուշ	Դիլիջան	112000	103000	103200
	Իջևան	136500	129000	129700
	Բերդ	44300	58000	58500
	Նոյեմբերյան	36000	46400	46400
	Այրում	26100	34800	34800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2011թ. դեկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2011թ. նոյեմբերի համեմատ, նվազել են 0.6%-ով:

Ընդհանուր առմամբ, 2011թ. դեկտեմբերին հանրապետությունում օտարվել են 1673 միավոր /812.61 հա/ հողեր, որից Երևանում՝ 131 միավոր /10.06 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 882 միավոր /719.28 հա/, որից Երևանում՝ 6 միավոր /0.43 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 533 միավոր /49.89 հա/, որից Երևանում՝ 113 միավոր /9.23 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 204 միավոր /8.74 հա/, որից Երևանում՝ 9 միավոր /0.35 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 14 միավոր /7.29 հա/, որից Երևանում՝ 3 միավոր /0.05 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 34 միավոր /26.96 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 6 միավոր /0.45 հա/:

2011թ. դեկտեմբերին հանրապետությունում օտարված հողերից 1446 միավորի /718.15 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 118 միավոր /8.64 հա/, նվիրատվության գործարքներ՝ 213 միավորի /90.88 հա/, որից Երևանում՝ 11 միավոր /1.30 հա/ և փոխանակության գործարքներ՝ 14 միավորի /3.59 հա/, որից Երևանում՝ 2 միավոր /0.12 հա/:

Հանրապետությունում 2011թ. դեկտեմբերին, 2010թ. դեկտեմբերի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 9.5%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 21.4%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 3.5%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 8.3%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 118.27 հա, որից 112.44 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 29.3%-ը կամ 424 գործարքներ /234.60 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 58 գործարք /5.13 հա/, իսկ 69.9%-ը կամ 1011 միավորը /463.21 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 60 միավոր /3.51 հա/: 2011թ. դեկտեմբերին հանրապետությունում գրանցվել են հողերի կառուցապատման իրավունքի վաճառքի 11 գործարք /20.34 հա/:

Ստորև ներկայացվում է 2011թ. դեկտեմբերին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	
Երևան	0	0.00	1	0.03	52	4.84	5	0.27	6	0.43	1	0.01	51	2.99	2	0.08
Արագածոտն	17	26.12	0	0.00	2	0.54	12	0.30	61	49.71	0	0.00	31	2.53	1	0.09
Արարատ	14	29.84	0	0.00	6	0.52	8	0.04	54	34.43	0	0.00	34	2.48	4	0.09
Արմավիր	18	42.83	0	0.00	0	0.00	10	0.36	103	69.61	0	0.00	49	5.21	2	0.26
Գեղարքունիք	6	5.68	1	1.00	22	2.74	5	0.05	73	36.13	0	0.00	23	2.21	3	0.42
Լոռի	7	2.19	1	0.04	6	0.24	19	0.61	111	106.43	0	0.00	21	2.01	5	0.13
Կոտայք	18	29.37	2	5.20	19	2.90	47	0.77	113	59.43	0	0.00	94	9.63	7	0.08
Շիրակ	6	10.77	5	0.88	10	0.21	19	2.99	42	42.69	0	0.00	13	1.91	1	0.02
Սյունիք	13	18.47	0	0.00	1	0.03	5	0.05	18	13.22	1	0.10	12	0.80	3	0.03
Վայոց Ձոր	10	37.68	0	0.00	6	0.52	3	0.25	12	4.44	0	0.00	3	0.09	8	0.64
Տավուշ	2	1.65	0	0.00	7	0.86	8	0.55	28	9.83	1	0.02	12	0.86	0	0.00
Ընդամենը	111	204.60	10	7.15	131	13.40	141	6.24	621	426.35	3	0.13	343	30.72	36	1.84

Ստորև ներկայացվում է 2011թ. դեկտեմբերին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/			
Երևան	12	0.49	1	0.03	6	0.19	5	0.27	46	4.64	0	0.00	0	0.00	46	4.64	0	0.00
Արագածոտն	1	0.001	0	0.00	0	0.00	1	0.001	28	26.63	15	25.79	0	0.00	2	0.54	11	0.30
Արարատ	2	0.081	0	0.00	1	0.08	1	0.001	26	30.32	14	29.84	0	0.00	5	0.44	7	0.04
Արմավիր	1	0.004	0	0.00	0	0.00	1	0.004	27	43.19	18	42.83	0	0.00	0	0.00	9	0.36
Գեղարքունիք	3	1.30	0	0.00	2	1.28	1	0.02	31	8.17	6	5.68	1	1.00	20	1.46	4	0.03
Լոռի	9	0.12	0	0.00	2	0.07	7	0.05	24	2.96	7	2.19	1	0.04	4	0.17	12	0.56
Կոտայք	9	2.11	0	0.00	6	1.96	3	0.15	75	35.96	16	29.19	2	5.20	13	0.95	44	0.62
Շիրակ	8	0.13	1	0.02	3	0.07	4	0.04	32	14.73	6	10.77	4	0.86	7	0.14	15	2.96
Սյունիք	2	0.07	0	0.00	1	0.03	1	0.04	17	18.49	13	18.47	0	0.00	0	0.00	4	0.02
Վայոց Ձոր	2	0.05	0	0.00	2	0.05	0	0.00	15	33.34	8	32.62	0	0.00	4	0.47	3	0.25
Տավուշ	9	0.93	0	0.00	2	0.38	7	0.55	8	2.134	2	1.65	0	0.00	5	0.48	1	0.004
Ընդամենը	58	5.29	2	0.05	25	4.11	31	1.13	329	220.56	105	199.03	8	7.10	106	9.29	110	5.14

Հանրապետությունում 2011թ. դեկտեմբերին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 6 գործարք /5.57 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2011թ. դեկտեմբերին, 2010թ. դեկտեմբերի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 27.1%-ով: Ընդ որում, Երևանում աճել է 4.2 անգամ, իսկ մարզերում միասին վերցրած՝ աճել է 15.2%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 52.2%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ աճել է 7.1%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել է 17.0%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ մնացել է անփոփոխ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մավերնար /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մավերնար /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	14	25.17	39.1	868.4	228.9	38	32.65	365.0	12000.0	4120.0
Ապարան								86.5	2727.3	675.5
Թալին	1	0.63	204.8	204.8	204.8	16	6.83	93.6	5494.5	563.2
Ծաղկահովիտ						4	8.25	79.5	1000.0	232.5
Արարատի մարզ										
Արտաշատ	2	1.15	731.3	4515.5	2623.4	10	5.68	335.1	10833.3	2516.2
Մասիս	2	8.00	63.5	65.8	64.7	18	7.73	200.0	11904.8	3026.4
Վեդի	10	20.69	65.4	289.2	164.3	26	21.02	207.0	10795.1	1651.4
Արմավիրի մարզ										
Արմավիր	7	22.44	63.0	3197.5	702.6	58	34.96	294.3	9090.0	1548.6
Բաղրամյան	8	14.00	35.4	67.5	39.5	15	20.33	90.6	2561.1	722.5
Վաղարշապատ	3	6.40	72.4	2352.2	832.4	29	13.89	444.4	11764.7	2865.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						51	21.21	199.8	1875.0	385.0
Ճամբարակ	3	3.94	132.0	1357.2	935.5	12	6.84	60.5	953.3	330.0
Մարտունի	1	1.10	407.0	407.0	407.0	6	1.26	51.1	2850.0	715.2
Սևան	1	0.50	185.5	185.5	185.5	1	0.21	52.2	2134.8	312.2
Վարդենիս	1	0.14	4142.9	4142.9	4142.9	3	6.62	41.2	2575.1	358.2
Լոռու մարզ										
Այվերդի	1	0.15	2442.0	2442.0	2442.0	10	3.75	170.4	6424.2	711.1
Գուգարք	5	1.84	200.1	749.0	523.6	7	1.49	234.6	6065.9	785.3
Սպիտակ	1	0.20	416.0	416.0	416.0	1	1.39	250.0	5555.5	720.1
Ստեփանավան						4	4.97	90.6	1686.6	287.2
Տաշիր						89	94.84	45.3	1384.4	135.2
Կոտայքի մարզ										
Աբովյան	4	1.56	166.1	727.5	339.1	35	10.98	279.3	11942.7	4600.0
Եղվարդ	11	27.26	14.9	1215.6	504.1	46	28.45	174.4	11971.8	2915.5
Հրազդան	1	0.38	1053.6	1053.6	1053.6	24	15.43	130.5	10256.4	1985.8
Շիրակի մարզ										
Ախուրյան						6	6.19	252.0	1693.1	576.2
Ամասիա	4	9.77	123.6	129.0	125.1	4	9.35	40.9	261.0	128.5
Անի						10	11.62	110.6	546.9	370.7
Աշոցք	2	1.00	74.2	74.2	74.2	9	7.89	58.5	215.8	119.8
Արթիկ						13	7.65	79.4	1428.6	367.8
Սյունիքի մարզ										

Գործիս								92.6	1023.2	681.5
Կապան	7	13.19	28.3	277.5	152.0			120.0	841.6	328.2
Մեղրի	2	2.33	650.0	880.0	765.0	5	0.52	193.0	3000.0	720.2
Սիսիան	4	2.95	117.7	135.0	130.7	13	12.70	46.3	1977.4	485.5
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	5	26.47	44.7	632.9	190.4	12	4.44	125.0	10000.0	1865.5
Վայք	3	6.15	107.8	162.8	126.1			58.8	1430.7	595.2
Տավուշի մարզ										
Բերդ						16	2.17	213.3	3783.8	672.5
Իջևան	2	1.65	157.1	439.4	298.2	3	0.70	267.5	9454.5	1225.6
Նոյեմբերյան						9	6.95	46.7	7368.4	825.6

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տնտեսագրությունից և հողատնտեսներից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						27	21918.0	130.7	22200.0	2572.6
Ապարան								124.1	609.6	355.0
Թալին						2	1630.0	63.2	1454.8	152.3
Ծաղկահովիտ	2	5400.0	86.4	86.4	86.4			60.0	214.3	86.5
Արարատի մարզ										
Արտաշատ	1	1150.0	545.4	545.4	545.4	5	3680.0	173.9	7140.3	894.0
Մասիս	3	2550.0	1253.9	1264.0	1257.5	19	11650.0	187.5	25000.0	1211.6
Վեդի	1	661.0	832.1	832.1	832.1	10	9469.0	126.1	5000.0	660.5
Արմավիրի մարզ										
Արմավիր						19	22872.0	131.6	9090.9	1215.1
Բաղրամյան								100.0	833.3	230.0
Վաղարշապատ						30	29229.0	197.4	26528.4	1530.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	9	7460.0	266.8	284.9	276.7	2	760.0	186.6	1084.3	635.5
Ճամբարակ	9	5291.0	144.4	267.0	224.2	2	1300.0	71.3	2286.2	148.1
Մարտունի	2	1800.0	61.7	219.8	140.7	17	16936.5	119.3	5000.0	277.3
Սևան								240.0	3110.4	295.0
Վարդենիս						2	3105.0	72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Ալավերդի						3	3150.0	114.3	1388.9	215.3
Գուգարք	2	618.0	82.5	1978.3	1030.4	10	6854.0	77.9	14083.3	1052.6
Սպիտակ	2	1077.0	148.0	273.8	210.9	6	8220.0	104.9	1348.3	204.3
Ստեփանավան						2	1860.0	88.2	1666.7	175.3
Տաշիր								45.3	400.0	89.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	4	2066.0	826.0	4977.2	2578.5	35	36111.0	264.5	35353.5	1964.3
Եղվարդ	8	6156.0	1498.3	5037.5	3854.1	47	43891.0	173.6	27000.0	2843.0
Ջրագղան	1	1246.0	279.3	279.3	279.3	9	13212.0	117.7	34848.5	1321.3

Շիրակի մարզ										
Ախուրյան	1	390.0	2153.9	2153.9	2153.9	1	216.0	113.6	18750.0	331.0
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի						5	6570.0	67.9	180.6	158.0
Աշոգք						2	8180.0	40.8	144.0	63.2
Արթիկ	6	964.0	450.0	5350.0	2412.5	5	4120.0	111.8	5000.0	216.5
Սյունիքի մարզ										
Գորիս						2	1310.0	112.2	1700.0	371.6
Կապան						1	600.0	67.9	2638.9	293.2
Մեղրի						8	4732.0	68.5	632.9	190.0
Սիսիան						1	1350.0	123.5	875.0	192.5
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	4	4684.0	38.0	1492.9	436.5	3	901.0	96.7	7659.6	498.4
Վայք								120.7	1448.3	198.2
Տավուշի մարզ										
Բերդ						1	1300.0	75.8	810.0	110.3
Իջևան	5	4848.0	554.3	3000.0	2510.9	11	7253.0	74.1	14423.1	519.0
Նոյնմբերյան								125.0	1948.1	220.0

2011թ. դեկտեմբերին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել է նախկինում անհատույց սեփականաշնորհման 11 գործարքներ 5.17 հա մակերեսով, ընդ որում 4-ը՝ Վայոց Ձորի /0.30 հա/, 3-ը՝ /1.16 հա/ Տավուշի և 2-ական՝ /0.30 հա/ Լոռու, /3.41 հա/ Շիրակի մարզերում:

2011թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 831 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 3.7%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 73.5%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2011թ. դեկտեմբերին, 2011թ. նոյեմբերի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 28.6%-ով, իսկ 2010թ. դեկտեմբերի համեմատ՝ 0.7%-ով:

2011թ. դեկտեմբերին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 49 բնակարանների, 20 անհատական բնակելի տների, 344 հասարակական, 43 արտադրական նշանակության օբյեկտների, 364 միավոր /2387.10 հա/ հողերի և 11 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2011թ. դեկտեմբերին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 20 վարձակալության գործարքների /այդ թվում 14 միավոր՝ 0.01 հա, կառուցապատման իրավունքով/ քանակը 2011թ. նոյեմբերի համեմատ աճել է 3.3 անգամ, իսկ 2010թ. դեկտեմբերի համեմատ՝ 4.0 անգամ: 2011թ. դեկտեմբերին հանրապետությունում վարձակալված 2387.10 հա հողերից 12.99 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 2374.12 հա հողերից 223.36 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 32.99 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Լոռու մարզում՝ 1253.50 հա, որից 279.26 հա գյուղատնտեսական նշանակության: 2011թ. դեկտեմբերին հանրապետության մարզերում վարձակալվել են 1137.08 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2011թ. դեկտեմբերին հանրապետության մարզերում գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունը:

Մարզի անվանումը	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	11	60.85
Արարատ	9	42.22
Արմավիր	1	19.99
Գեղարքունիք	32	191.36
Լոռի	36	279.26
Կոտայք	3	5.01
Շիրակ	7	10.81
Սյունիք	55	454.96
Վայոց Ձոր	19	56.47
Տավուշ	3	16.15
Ընդամենը	176	1137.08

2011թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3468 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 15.5%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2011թ. նոյեմբերի համեմատ, աճել է 47.4%-ով, իսկ 2010թ. դեկտեմբերի համեմատ՝ 13.5%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /33.8%/, առանձնատների /19.3%/, հասարակական նշանակության օբյեկտների /8.9%/ և հողերի /34.1%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1245 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2011թ. նոյեմբերի համեմատ, աճել է 9.5%-ով, իսկ 2010թ. դեկտեմբերի համեմատ՝ 2.1%-ով:

2011թ. դեկտեմբերին հանրապետությունում գրավադրվել են 1533.11 հա հողեր, որից 91.24 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 39.7%-ը կամ 607.98 հա գյուղատնտեսական նշանակության են, որից 0.16 հա Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Լոռու մարզում՝ 783.48 հա:

2011թ. դեկտեմբերին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 243 գործարքներ, որից 133-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքների 82.7%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 11.9%-ն՝ անհատական բնակելի տների, 1.6%-ը՝ հողերի, 0.8%-ը՝ արտադրական նշանակության օբյեկտների, 2.9%-ը՝ հասարակական նշանակության օբյեկտների նկատմամբ: 2011թ. նոյեմբերի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 0.8%-ով, ընդ որում Երևանում նվազել է 30.4%-ով, իսկ մարզերում միասին վերցրած աճել՝ 2.2անգամ: 2010թ. դեկտեմբերի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 20.3%-ով, ընդ որում Երևանում նվազել է 10.1%-ով, իսկ մարզերում միասին վերցրած աճել՝ 2.0անգամ:

2011թ. դեկտեմբերին հանրապետությունում ապապետականացման միջոցով մասնավորեցման 4 /Սյունիքի մարզում/ գործարք է արձանագրվել, որի քանակը 2011թ. նոյեմբերի համեմատ նվազել է 20.0%-ով և 2010թ. դեկտեմբերի համեմատ ավելացել է 4-ով:

2011թ. դեկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 5953 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2011թ. նոյեմբերի համեմատ աճել է 92.2%-ով, իսկ 2010թ. դեկտեմբերի համեմատ՝ 96.5%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 26.6%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /35.2%/:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե